

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԵԻՆ

XIX դարում և XX դարի սկզբին Վասպուրականի ազգաբնակչության կենցաղում արմատավորված էին կանանց և տղամարդկանց տարազի երկուական յուրօրինակ համալիրներ, որոնք ձևավորվել էին տարբեր գավառների բնակչության սլավոններին, ժողովրդի զբաղմունքին, սոցիալ-տնտեսական վիճակին ու ճաշակին համապատասխան:


Կանանց տարազի առաջին համալիրը՝ ավանդականը իր փոփոխականերով տարածված էր նաև Արևմտյան Հայաստանի մի քանի գավառներում՝ հատկապես Մուշ-Տարոնում, Հարքում, ինչպես նաև Սեբաստիայում, Կեսարիայում, Խարբերդում: Այդ համալիրը հարատևեց ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմը, մինչև եղեռնի օրերը, իսկ Արևելյան Հայաստան ներգաղթածների մեջ այն որոշ ժամանակ պահպանվեց նաև նրանց նոր բնակավայրերում:

Կանացի տարազի երկրորդ համալիրը՝ քաղաքայինը ձևավորվել է XIX դարի վերջին և հաշտակեց բնակչության նոր վայրերում մինչև 1920-ական թվականները:

Զգեստը ձևում, կարում էին կանայք՝ շուլալ կարով, քաղելակարով, թակալակարով: XIX դարի կեսերին Վասպուրականում կային մի քանի դերձակներ, իսկ 1880-ական թվականներին, երբ Զինգերի կարի մեքենան մուտք գործեց Վան, դերձակների (ֆուանգ թարզի)¹ թիվը հասավ հարյուրի: Դերձակությամբ զբաղվում էին միայն տղամարդիկ, կարելով թե՛ տղամարդկանց, և թե՛ կանանց զգեստներ:

¹ Ֆուանգ թարզի անվանում էին միայն մեքենայով կարող դերձակներին:

Առաջին համալիրի բաղկացուցիչ մասերից էր վերնա-
զգեստը (զպոն) երեք տարբերակով: Առաջին տարբերակը
ձևվում էր հետևյալ կերպ՝ 48 սմ լայնություն և կրողի հա-
սակի երկարություն ունեցող մանուսա կտորը երկայնակի



Տախտակ 1. Կանացի վերնազգեստի (զպոն) ձևվածքի երեք
տարբերակ (առջևից և ետևից):

ծավլում էր իրար վրա, կենտրոնում կիսաշրջանաձև կտրու-
վում էր վզի համար, ապա այդ կտրվածքի ուղիղ մեջտեղից
կտորի մեկ տապակը կտրվում էր երկայնակի մինչև եզրը:
Այսպիսով, ստացվում էր վերնազգեստի հիմնական մասը,
որի առջևից և ետևից, լայնացման նպատակով, կողքերին
ավելացվում էր մեկական եռանկյունաձև կտոր (չաբուխ):
Առջևում աջ ու ձախ փեղկերի եզրերին ավելացվում էին վե-
րոհիշյալ եռանկյունաձև կտորի (չաբուխ) կրկնակի լայնու-
թյունն ունեցող ուղղանկյուն-եռանկյունաձև մեկական կտոր,

ուղիղ կողմով միացված հիմնական մասին, իսկ շեղ կողմով այն դգեստի եզրն էր (տախտակ 1, նկ. 1 ա, բ): Այդ ավելացված կտորի վերևի ծայրը վերջանում էր կրծքամասում 5 սմ լայնությամբ: Այսպիսով, մեկ վերնազգեստի համար անհրաժեշտ էր վեց լայնացնող հատված (շաբուխ): Չաբուխը ձևվում էր շեղակի և կարվում անկյունից անկյուն: Վերնազգեստի ձևը պարզ էր, հասարակ, առանց ավելորդ ությունների. վերևի մասը՝ ուսից մինչև գոտկատեղ հարմարեցվում էր իրանին, կիպ էր, որը տեղական բարբառով կոչվում էր ուսպատի:

Վերնազգեստի թևերը ձևում էին ուղիղ, թևաբերանը հիմքի համեմատ աննշան նեղ էր և փոքր ճեղքով: Անութներում ավելացվում էին փոքր եռանկյունաձև մեկական հատված առջևից և ետևից: Ունենում էր նեղ օձիք: Կողքերում՝ կարի ուղղությամբ թողնվում էր մեկական գրպանաձեղք, կամ միայն մեկը (սովորաբար ձախ կողմում): Գրպանից մինչև քղանցքի եզրը վերնազգեստը բացվածքով էր, ինչպես որ Սյունիք-Արցախի կանանց տարազի համալիրի վերնազգեստ-իրեքփշկանին: Այս երկու տարազախումբերի վերնազգեստի ընդհանրությունը ձևով պճղնավոր լինելու մեջ էր, իսկ ձևվածքով դրանք տարբեր էին: Վասպուրականի կանանց վերնազգեստի քղանցքի կողքի բացվածքները, աջ ու ձախ փեղկերի եզրերը, թևաբերանը շաբուլ (ճեղք) հանդերձ վարդարվում էին կարմիր և կանաչ գույնի տրեղով:

Ամենօրյա և տոնական վերնազգեստը ուներ նույն ձևվածքը և կարվում էր տարբեր գույնի գծանախշեր ունեցող կտորի տարբեր երանգներով: Սովորաբար հագնում էին երկու-երեք վերնազգեստ, իսկ տոն օրերին՝ անգամ հինգը: Նման դեպքում մեկը մյուսից մոտ 5 սմ-ով կարճ էր կարվում, որպեսզի յուրաքանչյուր վերնազգեստ-զպունի քղանցքը նեղ շերտով երևա: Վերջին հագած վերնազգեստը ամենակարճն էր: Մեկ վերնազգեստ կարելու համար անհրաժեշտ էր 48 սմ լայնություն ունեցող կտորից 5,5 մ—6 մ, նույնքան էլ սպիտակ կտավ՝ աստառապատման համար:

Վերնազգեստի երկրորդ տարբերակը, որ կարվում էր նույնպես վերոհիշյալ մանուսա կտորից, կողքերում և թև-

քարերանին ուներ առաջին տարբերակի նման բացվածք. կողքերում ունենում էր մեկական գրպանաբացվածք: Այս տարբերակի թևերի ձևվածքը այլ էր (նկ. 4): Թևքերը բաղկացած էին երկու հատվածից. նեղ հատվածը տեղադրվում էր թևի հիմքում, իսկ թևաբերանը ձևավոր էր (տախտակ 1, նկ. 2 ա, բ): Զարդարման հղանակի մեջ տարբերություն չկար: Այս տարբերակի համար նույնպես անհրաժեշտ էր 5,5—6 մ կտոր, եթե այն ուներ 48 սմ լայնություն, նույնքան էլ աստառի համար: Տոնական վերնազգեստը, ինչպես նշեցինք, ձևվածքով չէր տարբերվում ամենօրյա զգեստից, քայց ուներ զարդարման հատուկ ձև, որը տարածված էր



Նկ. 4. Կանացի վերնազգեստի (զպուն) երկրորդ տարբերակը,
XIX դ. (ՀՊՊԹ):

գրեթե ամբողջ Վասպուրականում: Վերջին վերնազգեստի կրծքամասի եզրին մինչև գոտկատեղ ամրացվում էր արծաթյա զարդ (շամշիկ), որ բաղկացած էր մեկընդմեջ դասավորված մեծ և փոքր 12 աղավնաձև տախտակների շարանից: Այդ տախտակները ծայրերում ունեին կարճ շղթայի կախիկներ, շրջանաձև կամ լուսնաձև զարդերով: Շամշիկը մշտապես ամրացվում էր զգեստին, հետևաբար այն ոչ թե լրացուցիչ զարդ էր, այլ՝ զգեստի անբաժան մասը:

Վերնազգեստի զարդարման միջոց էին նաև հտեամասի քղանցքի զարդագծերը, որոնք արվում էին մեկ ծայրում լայնակի, մանուսա կտորը հյուսելու ժամանակ: Այդ կատարվում էր հետևյալ եղանակով. կտորի հենքի թելերը մեկընդմեջ թողնվում էին և հագցնում դեղին գույնի բամբակյա թել արծաթաթելի խառնուրդով: Վերնազգեստը ձևվում էր այնպես, որ այդ գծանախշերը ընկնեին քղանցքի մոտ: Դրա կողքերում ավելացված եռանկյունաձև կտորներն առանց գծանախշի էին: Տոնական և ամենօրյա վերնազգեստները նույն ձևվածքն ունեին նաև Արևմտյան Հայաստանի մյուս նահանգներում:

Վերնազգեստ-ղպունի երրորդ տարբերակը կողքի լայնացնող կտորների (չաբուխ) ձևվածքով շապկի ձևվածքի հետ ուներ ընդհանրություն: Այդ կտորները ավելացվում էին ոչ թե գոտկատեղից ներքև, այլ անմիջապես թևքին կցելով, կարելով (տախտակ 1, նկ. 3 ա, բ): Վերնազգեստի ուսերը կարող էին. չնայած կարը՝ ուսերը թեք ձևելու հետևանք էր, բայց այս տարբերակի առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ ուսերը ձևում և կարում էին ուղիղ: Սրա թևքերը բաղկացած էին երեք հատվածից, որոնք միացվում էին իրար ներսի կարով: Թևքի հիմքի և թևքաբերանի լայնությունները հավասար էին: Թևքաբերանը ուներ ճեղք: Այս տարբերակում աջ ու ձախ փեղկերի եզրերին ավելացված լայնացնող կտորները բաղկացած էին երկու հատվածից, որոնք միացվում էին միմյանց ներսի կարով լայնակի: Այն ուներ մեկ չրպանաբացվածք ոչ թե կողքին, այլ աջ փեղկի վրա՝ լայնակի:

Վերնազգեստի երեք տարբերակները գործածական էին Վասպուրականի գավառներում միաժամանակ: Վերնազգեստ-

զպուների ձևվածքը երեք տարբերակով տարածված էր նաև Արևմտյան Հայաստանի մի քանի այլ նահանգներում: Որոշ վայրերում այն կարվում էր ավելի երկար, եզրերը ավիքաձև կտրվածքով, ինչպես օրինակ, Բարձր Հայքում լրացուցիչ ներքնաղգեստ-անթարու և գոգնոցի երկրորդ տարբերակը կարելիս¹: Սակայն ձևվածքի հիմնական եղանակը միևնույնն էր:

Այսպիսով, Վասպուրականի կանանց վերնաղգեստ-զպուներ Արևմտյան Հայաստանի տարազախմբերի վերնաղգեստների ձևվածքի հիմքն է հանդիսանում: Դեռևս միջնադարում Վասպուրականից Փոքր Հայք, իսկ հետագայում նաև այլ գավառներ տեղի ունեցած-գաղթի հետևանքով Վասպուրականի տաքաղի, հատկապես կանանց վերնաղգեստի տեղաշարժը և տարածումը միանգամայն հասկանալի է դառնում նաև 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբին:

Վերնաղգեստի տակից մարմնի վրա հագնում էին շապիկը, որը կարվում էր կարմիր գույնի կտավից (շիլա): Երկարությունը հասնում էր մինչև կոճերը: Քղանցքը զարդարվում էր ծաղկավոր կտորի լայն շերտով (15 սմ), կանաչ ու կարմիր գույնի մետաքսյա թելերով հյուսված տրեզով: Կրծքի բացվածքը հասնում էր մինչև զոտկատեղը և կոճկվում էր անրակի վրա մեկ կոճակով: Գ. Սրվանձտյանցը, Վասպուրականի բնակարանի կառուցվածքը նկարագրելու առիթով, խոսում է նաև շապիկի քղանցքը խնամքով զարդարելու մասին: «Տանիքի եզրին կառուցված պարիսպների ներսում,— գրել է նա,— պաշտպանվելով փողոցից տեսնվելուց կանայք, անգամ ճախարակով, սանդերքով գործ էին անում այնտեղ՝ թաթ ու թաթպան էին հյուսում, ասեղով շապիկ ու զլխարկ էին նախադարձում, խոնջան կարում, ունիկ շարում»²:


Շապիկի ձևվածքը հետևյալն էր. 55 սմ լայնություն ունեցող կտորի երկու երկարություն ծալելով, վզի ու կրծքի բացվածք կտրելով ստացվում էր շապիկի կենտրոնական հիմնական մասը, որին կողքերում թեքատակից սկսած առջևից և

¹ Ն. Ք. Ավագյան, Բարձր Հայքի ժողովրդական տարազը XIX դարում և XX դարի սկզբին, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 4, էջ 188:

² Գ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց, Կ. Պոլիս, 1910, էջ 19:

ետեից ավելացվում էր եռանկյունաձև մեկական հավելված: Այդ դեպքում կողքերը կարող էին, կամ էլ կողքի կտորը (շաբուխ) կարում էին անմիջական, իսկ եզրերը, որ միանում էին ետևի և առջևի հիմնական մասերին, կարում էին շեղակի: Կողքի հավելվածի և թևքի միջև կազմված անկյունում տեղադրվում էր անութակտորը (սուզակ): Թևքերը ձևում էին լայն, թևքսրերանը հիմքի համեմատ կամ հավասար էր, կամ աննշան նեղ էր: Շապկի այս ձևվածքը, բացի Վասպուրականից, տարածված էր նաև Արևմտյան Հայաստանի մյուս նահանգների և Կովկասի հայաբնակ վայրերի կանանց և տղամարդկանց տարազի համալիրներում:

Կանանց տարազի առաջին համալիրի բաղկացուցիչ մասերից էր բամբակյա կամ մետաքսյա (ղանավուզ, կանավուզ) կարմիր գույնի կտորից կարվող վարտիքը: Այն երկար էր, երևում էր բոլոր զգեստների տակից մոտ 10—15 սմ: Փողերը ձևում էին լայն. դրանց միջև ավելացվում էր շեղանկյունաձև կտոր՝ երկտակ ծալած, ըստ որում, մեկ ծայրը առջևից, մյուսը՝ ետևից: Վերևամասը խոնջանակապով էր, իսկ փողաբերանը թելով հավաքվում էր և կապվում:



Տախտակ 2. Կանացի տաք վերնազգեստի (ղալմա) և դոզնոցի առաջին տարբերակի երկու տեսակի ձևվածքը:

Համալիրին հատուկ էր գոգնոցը (մեզար), որը գործածական էր երկու տարբերակով: Առաջին տարբերակը (տախտակ 2, նկ. 2, 3) կարվում էր մետաքսյա երկնագույն, իրենից բուսանախշերով կտորից: Գոգնոցը ամրացվում էր վզին և թևքատակերի ուղղությամբ թիկունքին: Այս տարբերակի գոգնոցի թևքատակի ձևվածքի երկու տեսակ կար (տախտակ 2, նկ. 2, 3): Երկու տեսակն էլ տարածված էին Վանում, Արծկեում, Թիմարում, Մոկսում:


Գոգնոց-մեզարի երկրորդ տարբերակը ամրացվում էր գոտկատեղում, բրդյա գունավոր թելերով հյուսված նեղ գոտու (մեզարի թել) միջոցով: Այս տարբերակը քառանկյունաձև էր, կարվում էր խոշոր հյուսվածքով բրդյա կապույտ գույնի կտորից: Գոգնոցի ամբողջ մակերեսը (նկ. 5) բրդյա գունավոր թելերով ասեղնագործվում էր երկրաչափական զարդանախշերով, թռչունների ու կենդանիների պատկերներով և զարդարվում ուլունքներով, խխունջներով, սպիտակ և երկնագույն կոճակներով: Այս տարբերակը տարածված էր Մոկսի, Շատախի, Ալջավազի, Թիմարի գավառներում¹:

Գոգնոց-մեզարի երկրորդ տարբերակը թե՛ ձևվածքով, գործածման եղանակով, նյութով, թե՛ զարդանախշերով ուներ ընդհանրություն Հարբի, Տարոնի, Սասունի գավառների կանանց տարազի համալիրներում գործածվող տոնական գոգնոց-մեզարների հետ: Այս զգեստատեսակը ևս Վասպուրականի ազդեցությամբ մտել էր վերոհիշյալ գավառների կանանց տարազի համալիրի մեջ ու հարատևեց տուրուքերանցիների գաղթից հետո (1830 թ.) նրանց բնակության նոր վայրերում՝ Ապարանի շրջանում մինչև XX դարի սկիզբը և սասունցիների բնակության նոր վայրերում՝ Թալինի շրջանում մինչև 1920-ական թվականները:

Գոգնոցի վրա կապվող բրդյա նեղ գոտուց բացի, Վասպուրականի կանանց տարազի համալիրներին հատուկ էր նաև արծաթյա գոտին, որը պատրաստվում էր սևադման, գերազանցապես զուգաթելի (մանրարուրք, ֆիլիգրան) եղա-

¹ Տե՛ս Հայաստանի պատմության պետական թանգարան (այսուհետև՝ ՀՊՊԹ), ազգագրական ֆոնդ 664, 665, 667, 674, 650, 659, 681 գոգնոցները:

նակով: Սևադման եղանակով գոտու տախտակների վրա պատկերվում էին Վասպուրականի հուշարձանները, յուրաքանչյուր տախտակի վրա գրվում էր հուշարձանի անունը:




Նկ. 5. Կանացի գոգնոցի (մեզար) հրկրորդ տարրերակ, XIX դ. ՀՊՊԹ:

Զուգաթելի եղանակով պատրաստվող գոտիները ունենում էին բուսանախշեր, մեծ, գորտաձև ճարմանդ, զարդարվում էին փիրուզյա և գունավոր ալլակներով (նկ. 6):

Տարեց կանանց տարազի համալիրում գործածական էր նաև բրդյա կտորից կարված գոտին: Գոտու համար նախընտ-

բությունը տրվում էր գունավոր շերտերով կտորին: Ունևոր խավի կանանց գոտին «Քիրման շալ» կտորից էր, որը ձեռք էր բերվում շուկաներից: Հյուսված և արծաթյա գոտիները



Նկ. 6. Կանացի արծաթյա գոտու ճարմանդ՝ գորտածե, XIX դ. ՀՊՊԹ:

պատրաստում էին տեղում: Հյուսված գոտին գործածական էր ինչպես կանանց, այնպես էլ՝ տղամարդկանց տարազի համալիրներում: Այդ գոտին կարվում էր երեք տապակ կտորից, յուրաքանչյուրը 25-ական սմ լայնությամբ: Դրանք միացվում էին միմյանց խաչմերուկ կարով: Ստացվում էր մեծ քառանկյունի, որի ծայրերում կարվում էր գունավոր ժապավեն, իսկ անկյուններում՝ երկուական կամ երեքական փնջիկներ¹:

Ձմռանը վերնազգեստի (զպուն) վրայից կանայք հագնում էին տաք վերնազգեստ, որը կոչվում էր դալմա: Երիտասարդ կանանց տաք վերնազգեստը կարվում էր կարմիր, իսկ տարեց կանանցը՝ կապույտ գույնի մահուդից: Այն ձևվածքով ուներ ընդհանրություն Բարձր Հայքի կանանց վերնազգեստի

¹ Տե՛ս ՀՊՊԹ, ազգագրական ֆոնդ. №№ 574, 609, 610, 2066, 8688, գոտիները:

(ընդապա) հետ: Վերևամասը կիպ էր (ռուպատի), իսկ գոտ-
կատեղից ներքև լայնանում էր շնորհիվ կողքերում ավելաց-
ված շեղակի ձևվածքով կարված կտորների (տախտակ 2):
Եզրերին կաշվում էր ոսկեթելով հյուսված տրեզ: Այդ ձևով
էին զարդարվում նաև Բարձր Հայքի կանանց վերնազգեստի
տարբերակները: Հետևապես այս երկու ինքնատիպ տարա-
զախմբերի վերնազգեստի ընդհանրությունն արտահայտվում
է նաև զարդարման եղանակի մեջ:

Տաք վերնազգեստ-դալմալի աջ ու ձախ առջևամասերի
վրա լինում էր մեկական երկայնակի գրպանատեղ, որի մի-
ջով օգտվում էին վերնազգեստ-զպուռնի գրպանից: Թևերը
հիմքում և թևաբերանում հավասար լայնություն ունեին:
Անութներում առջևից և ետևից ավելացվում էր մեկական
եռանկյունաձև անութակտոր (սուզակ): Կոկորդի մոտ ամ-
րացվում էր արծաթյա ճարմանդ¹: Ունևոր խավի կանանց
տաք վերնազգեստի կրծքամասը ոսկեթելով ասեղնագործվում
էր բուսական զարդանախշերով: Վասպուրականի ասեղնա-
գործման եղանակով և զարդամոտիվով պատրաստված տաք
վերնազգեստ-դալմալի և Բարձր Հայքի կանանց վերնա-
զգեստ-խրխալի միջև նույնպես ընդհանրություն կար:

Այսպիսով, Վասպուրականի կանանց տարազի համալի-
րին բնորոշ տաք վերնազգեստը, ամենայն հավանականու-
թյամբ, ավելի հին է, նախնական է և տարածվել է նաև
Բարձր Հայքում:

Տաք վերնազգեստ-դալման սովորաբար կարվում էր
վերնազգեստ-զպուռնից ավելի երկար²: Այն աստառապատ-
վում էր կարմիր գույնի կտավով կամ մետաքսյա կտորով:

Վասպուրականի կանանց տարազի առաջին համալիրի
գլխի հարդարանքը ևս տարածում էր գտել Արևմտյան Հա-
յաստանի մյուս նահանգներում: Դա հարևանություն, շփման,
տեղի ունեցած գաղթի և տեղաշարժերի արդյունք է: Մա-
զերը սանրում էին, մանր հյուսեր անում, դնում էին գլը-

¹ Ե. Լալայան, Վասպուրական, «Ազգագրական հանդես», գիրք XX,
Թիֆլիս, 1910, էջ 136:

² Տե՛ս ՀՊՊԹ, ազգագրական ֆոնդ №№ 988, 4585, դալմաները:

խարկը, որը կարվում էր կտավից, գրա՝ վրա կապում էին եռանկյունաձև գլխաշոր (փոխշիկ): Գլխի հարդարանքի կարևոր մասերից էր ճակտնոցը, որի եզրին կարվում էր կապույտ գույնի ուլունքների շարան և ծայրերը կապիչների միջոցով ամրացվում էր ծոծրակից վերև: Վտսպուրականին հատուկ կապույտ գույնի ուլունքները կարվում էին որպես ճակատը զարդարող և որպես կրողին շար աչքի ազդեցությունից պաշտպանող (աչքի ուլնիկին փոխարինող):

Գլխի հարդարանքի կարևոր մասերից էր ճակտնոցի վրա ամրացվող մախշան (քնար): Այն պատրաստվում էր արծաթից, դարձարվում էր վերադիր ուռուցիկ նախշերով, հասարակ և թանկարժեք գունավոր ակերով՝ փիրուղով, մարջանով: Ըստ թանգարանային նյութերի եղել է չորս տեսակի մախշա՝ 11 տախտականոց, 9, 7 և 5 տախտականոց: Առաջին երեքի տախտակները քառանկյունաձև են, վերևամասը՝ աստղաձև, բայց ունեն զարդարման տարբեր եղանակներ: Տախտակները իրար են միացվում՝ մարջանի գլխիկ ունեցող քորոցների միջոցով: Զորրորդ տախտակի ձևը միանգամայն այլ է: Դրա չորաքանչյուր տախտակի ներքևամասը ալիքավոր է, իսկ դեպի վեր՝ աստիճանաբար նեղանում է և անկյունավոր հատվում: Մտացվում է խողովակաձև անցք, թեև դրանց միջով անցկացնելու և դլխին կապելու համար: Մախշայի չորս տեսակները ներքևի եզրին ունեն օղեր, որոնցից կախված են անամեջ գնդիկներ (բլու), ըստ որում՝ առաջին երեքը ունեն չորսական օղեր և գնդիկներ, իսկ չորրորդը՝ յոթական: Բոլոր տեսակի մախշաների կենտրոնական տախտակի վրա տեղադրվում էր մեծ կամ փոքր կիսալուսնաձև դարդ (նոր)¹:

Մախշան պատվերով պատրաստում էին Վանի ոսկերիչարծաթագործները: Ունեւոր խավի կանայք պատվիրում էին թանկարժեք քարերով զարդարված և ավելի շատ տախտակներից բաղկացած մախշան. ամենալավը, չքեղը համարվում էր 11 տախտակներից բաղկացած մախշան: Այսպիսով, մախշայի միջոցով կարելի էր որոշել նաև կրողի սոցիալական վիճակը:

¹ ՏԷՍ 2ՊՊԹ, ազգագրական ֆոնդ №№ 4708, 5111, 5112, 5117, 5121, 5122, 5123, 5125, 5127, 5128, 5129, 5133 մախշաներ:

Գլխի հարդարանքի մասերից էին նաև քունքակախիկները (երեսնոց), քունքերից իջնող և ծնոտը բոլորող զարդը (շավա): Քունքակախիկները նույնպես արծաթից էին: Այն եռանկյունաձև տախտակ էր և մախչալի տախտակների նման զարդարված էր գունավոր ակերով: Տախտակը մեկ կողմից օղեր ուներ, որոնցից կախված էին ճական, իսկ ծայրերում մեկական լուսնաձև զարդ «նոր»¹: Շղթաները աստիճանաբար կարճանում էին. շատ կարճ շղթաներով քունքակախիկները օգտագործվում էին Թիմարում, Գյավաշում, Մոկսում, Ալջավազում, Արճեշում:



Նկ. 7. Կանացի զլխաշորի (շամբար) ետեի անկյունը (XIX դ. Հոգոթ):

¹ Տե՛ս Հոգոթ, ազգագրական ֆոնդ № 5045, 5047, 5050 քունքակախիկները:

Կանանց գլխի հարդարանքի կարևոր մասերից էր նաև կոտիկը, որը պատրաստում էին փայտից, պատում բամբակ-յա կարմիր գույնի կտավով: Այն շրջանաձև էր, զարդարվում էր կապույտ գույնի ուլունքներով և ամուր մնում էր կրողի գլխին՝ վրայից կապվող եռանկյունաձև երկրորդ գլխաշորի (փոխշիկ) միջոցով: Գլխի հարդարանքը լրիվ հավաքված էր համարվում վերջին գլխաշորը (լաշիկ) կապելուց հետո: Այս գլխաշորը մյուս տարազախմբերում (Սյունիք-Արցախ, Գողթն) միաժամանակ ծառայում էր նաև որպես բթկալ:

XIX դարում կանանց գլխի հարդարանքի կարևոր մասե-րից էր գլխաշորի եռանկյունաձև մեկ ալ տեսակ, որը կոչ-վում էր շամբար: Այս գլխաշորը կարում էին կարմիր գույնի քաթանից: Դրա եզրերին ամրացվում էր սպիտակ, կարմիր, երկնագույն ուլունքներով հյուսված մանր ծուպերով ժանյակ: Նույնից կախվող անկյունը ասեղնագործվում էր մետաքսյա գունավոր թելերով, երկրաչափական և ոճավորված բուսա-կան նախշերով (նկ. 7), կենդանու, թռչունի պատկերներով¹:

Աղջիկների և երիտասարդ կանանց գլխի հարդարանքի բաղկացուցիչ մասերից էր նաև թասակը: Այն պատրաստվում էր երկու եղանակով՝ զուգաթելի և դրվագման: Նրկու եղանա-կի դեպքում էլ զարդամոտիվը բունականն էր, իսկ դրվագ-ման ժամանակ՝ նաև երկարաչափականը: Դրվագվում էին համամեջ շրջանագծեր, շեղանկյունիներից կազմված շրջա-նակներ, կենտրոնում՝ հավերժության խորհրդանիշը: Թասակի եզրերին օղերի շարան էր արվում, որոնցից հագցնում էին կարճ շղթայով նշաձև կամ լուսնաձև կախիկներ: Նշաձև դար-դանախշը առնչվում է պտղաբերության գաղափարի հետ:

Թասակների շղթաները երբեմն երեք-երեք միացվում էին միմյանց թռչնաձև կամ շերեփուկաձև զարդատախտակիկնե-րով: Կախիկների հիմքում, կամ էլ ծայրերում ամրացվում էին երկնագույն ուլունքներ: Գլխի թասակը ամրացվում էր գլխարկի վրա: Թասակի մասին Վասպուրականի ժողովրդա-կան երգերում ասվում է՝

¹ Տե՛ս Հ.Պ.Թ., ազգագրական ֆոնդ №№ 702, 705, 709, 712, 715, 720 գլխաշորերը:

Իմ մեքը ձիկ թայնգ ի պախե,
Զնջիլ իրեսես կախե,
Թաս վեր գլխուս ի դրե,
Ոսկիյք ճակտես ի կախե.¹

կամ

Ախլիկ քո գլխս առծըթե թաս էր,
Լաճիկ քո գլխս սրմալու ֆաս էր:²

Կանանց գլխի հարդարանքում կարևոր դեր ունեն նաև ծամթելը, որի նպատակն էր հարստացնել բնական հյուսերը արհեստական, ավելի հաստ հյուսերով: Ծամթելը պատրաստվում էր մետաքսյա կամ բամբակյա թելերով, զարդարվում էր ուլունքներով, արծաթյա շղթաներով, կախիկներով: Կրողի քայլելու կամ պարելու ժամանակ այդ կախիկները դիպչելով միմյանց, ձայներ էին առաջացնում, հաճելի զննգ-զննոց, որի նպատակն էր հեռացնել շարքերին:

Բնական հյուսերի վրա Վասպուրականի գավառներում գործածական էր նաև ծամքաղը: Այն գունավոր թելերով հյուսված կամ ոլորված ժապավեն էր, մեծ մասամբ ուլունքազարդ: Ծամքաղը միացվում էր ծամերին թիկունքի վրա լայնակի, որպեսզի հյուսերն իրարից չհեռանան:

Տարազի համալիրի մեջ մտնող արծաթյա զարդերից բացի, գործածական էին նաև լրացուցիչ զարդերը՝ ականջօղը, մատանին, ապարանջանը, վզնոցը: Կանայք աջ ձեռքի բութ մատին դնում էին արծաթյա մատանի մեծ սարդիոնով: Մատանուն միացված թռչնաձև ճարմանդով շղթան ամրացվում էր վերնազգեստի (զպուն) թևքին: Տոսպում և Վայոց Ձորի գյուղերում գործածական էր շրջանաձև, 2 սմ տրամագիծ ունեցող քթի օղը (խղմա): Այն պատրաստվում էր զուգաթելի (ֆիլիգրան) եղանակով, զարդարվում էր երկնագույն ակով³:

Ձեռքի զարդերից տարածվածը ապարանջանն էր, որից մի քանի հատ էին հագցնում ձեռքին, որպեսզի շարժվելիս հաճելի ձայն արձակեին: Գործածական էր նաև Երուսաղեմից ձեռք բերվող ռավակյա ապարանջանը⁴:

1 Գևորգ Գ. Շերենց, Վանա սազ, առաջին մաս, 1885, էջ 49:

2 Գևորգ Գ. Շերենց, նշվ. աշխ. էջ 39:


3 Տե՛ս ՀՊՊԹ, ազգագրական ֆոնդ №№ 6388, 6557, 6589 խզմաները:

4 Գ. Սրվանձալյանց, Մանանա, Կ. Պոլիս, 1876, էջ 44:

կրծքադարդը (դյարդան) կաղմված էր երկու շարան կապույտ ու կարմիր գույնի ուլունքներով և զերմած արծաթյա շրջանակներից: Դրանցից ներքև կախվում էին 12 շրջանակ և արծաթյա շղթաներ, դրամակախիկներ¹: Մայրերում ունենում էր մեկական ճարմանդ, որոնց միջոցով կրծքադարդը լայնակի ամրացվում էր վերնաղզեստին:

Կանանց գլխի հարդարանքի վերոհիշյալ բաղկացուցիչ մասերը և լրացուցիչ զարդերը տարադի համալիրին տալիս էին յուրօրինակ արտահայտչականություն, դրավիշ տեսք, դրսևորում կրողի սոցիալական վիճակը, հասակային խմբերին պատկանելը, ճաշակը, վարպետների բարձրարվեստ գործերը:

Ազանելիքի բաղկացուցիչ մասն էին կաղմում նաև նախադարձ գուլպան և ոտնամանը: Գուլպան հյուսվում էր բրդյա զունավոր թելերով, բուսական զարդանախշերով (նկ. 8). ունենում էր լայնակի շարքերով դասավորված ծաղիկներ, գերազանցապես վարդ, շուշան, նարդիդ, եղևնու պատկերի շարաններ: Մաղկանախշերի հետ մեկտեղ լայնակի շարքերով մեկընդմեջ հաջորդում էին թռչունների պատկերները: Կար ոտնամանի երկու տեսակ՝ կոնաուրա և սուլ, որոնք կարում էին Վանի վարպետները:



Նկ. 8. Գուլպա, կանաչի
(XIX դ. վերջ, ՀՊՊԹ):

¹ Տե՛ս ՀՊՊԹ, ազգագրական ֆոնդ № 6698, 6699, 6703 կրծքադարդերը:

Կանանց տարազի երկրորդ համալիրը, որ կոչվում էր «քաղաքային» բաղկացած էր սպիտակեղենից, վերնազգեստից, գլխի հարդարանքից, ագանելիքից: Այս համալիրում վերնազգեստը բաղկացած էր երկու մասից՝ վերևամաս կուրտիկից և ներքևամաս դոմրից (միսիո): Վերնազգեստը կարվում էր իրենից բուսանախշեր ունեցող կապույտ գույնի մետաքսյա կտորից: Վերևամաս-կուրտիկը կիպ էր, թևքատեղերը բացվածքով, թևքերը նույնպես համապատասխան բացվածքով, վերևամասը լայն, թևքաբերանը՝ նեղ:

Ներքևամաս-դոմրը կարվում էր երկու դարսով. դրանց վրա որպես զարդարման միջոց, կարվում էին շքեղ կոճակներ:

Սպիտակեղենը զարդարվում էր նեղ ժանյակով: Վերնազգեստի տակից դորժածական էլ լրացուցիչ ներքնազգեստը (միսիո), որը կարվում էր սպիտակ կտավից, զարդարվում էր սպիտակեղենի նման ժանյակով:

Այս համալիրի գլխի հարդարանքը ավելի պարզ էր: Գլխին կապում էին գործարանային եղանակով պատրաստված մետաքսյա նուրբ կտորից կարված գլխաշոր: Նրիտասարդ կանանց գլխաշորը երկնագույն էր, սպիտակ, վարդագույն, իսկ տարեց կանանցը՝ շագանակագույն, կապույտ կամ սև գույնի:

Ագանելիքը՝ բրդյա թելերով հյուսված միագույն գուլպան էր և ոտնամանը, որը բաղկացած էր երկու մասից և կոչվում էր «բոտին գալոշ»: Նրկարաճիտք ոտնամանը՝ բոտին հագնում էին կաշուց կարված կրկնակոշիկի (գալոշ) մեջ:

Այս համալիրը սկզբում գործածական էր միայն քաղաքներում՝ Վանում, Արճեշում, Արծկեում, բայց XX դարի սկզբին թափանցեց նաև որոշ գյուղերի ունեոր ընտանիքները:

Այսպիսով, XX դարի սկզբին կանանց տարազի երկու համալիրները միաժամանակ գործածական էին Վասպուրականի տարբեր գավառներում, թե՛ քաղաքներում, և թե՛ գյուղերում:


Վասպուրականում XIX դարի վերջին և XX դարի սկզբին գոյություն ուներ տղամարդկանց տարազի նույնպես երկու համալիր՝ ավանդական և քաղաքային: Ավանդական տարազի համալիրի կարևոր բաղկացուցիչ մասերից էր շապիկը, որը կարում էին տեղական կտավից: Կտավի երկու անհրաժեշտ

շափի երկարութիւն ծալում էին իրար վրա, կտրում վզի բացվածքը, որից հետո մեկի աջ կողմում կտրում էին կրծքի բացվածքը: Վերջինս կոճկվում էր մեկ կոճակով: Կարվում էր կանգնած նեղ օձիք: Կողքերում առջևից և ետևից լայնացման նպատակով ավելացվում էին մեկական մեկ կողմը շեղ կրտրած եռանկյունաձև հավելված: Թևքերը լայն էին՝ հիմքը և թևաբերանը հավասար չափի (տախտակ 3, նկ. 1, 2): Թևաբերանը լայն շերտով էր և դրանցից կախված թեզանիքները (շալահիկ) մոտ 60 սմ երկարությամբ և 10—15 սմ լայնությամբ, օձիքը ասեղնագործում էին երկրաչափական նախշերով:


Շապկի այս ձևվածքը թեզանիքներով հանդերձ տարածված էր նաև Մշո, Տարոնի, Հարբի, Սասունի գավառներում: Դրանով փաթաթում էին շապկի թևքերի ծայրերը, որով և արգելում էին թևքերի կախվելը: Թեզանիքները զարդարում էին նաև գունավոր փնջիկներով, կապույտ գույնի ուլունքներով (նկ. 9, 10): Շապկի եզրերին կարվում էին կարմիր գույնի տրեզ և կարմիր գույնի կտորի ժապավեն: Ժապավենազարդի համար օգտագործվում էին բամբակյա և մետաքսյա միագույն կտորներ:

Միատեսակ ձևվածք ունեին համալիրի վարտիքն (շապկ-ընկեր) ու շալվարը: Միայն դրանց կտորն էր տարբեր: Վարտիքը կարվում էր շապկի կտորից՝ սպիտակ կտավից: Փողքերը խիստ լայն էին, եզրերը ծալում էին դեպի ներս և շուրջ կարով կարում: Գոտկատեղում լայն շերտով ծալվում էր դեպի ներս և շուրջակարվում: Այդ ծալած մասը կոչվում էր խոնջանադարձ, իսկ դրա միջով անցնող թելը՝ խոնջանակապ: Խոնջանակապը հյուսվում էր բամբակյա կամ բրդյա թելից, 15 սմ լայնությամբ: Դրա ծայրերը վերջանում էին մեկական փնջիկով: Լայն փողքերով վարտիքը ամռանը ծառայում էր նաև իբրև դրսի զգեստ: Դրա վրայից շոգ եղանակին այլևս շալվար չէին հագնում:

Շալվարը կարվում էր տեղում արտադրված բրդյա (շալ) կտորից, գերազանցապես Շատախի գավառի Թաղ դյուղի կտորից, որը հայտնի էր «Շատախի շալ» անունով: Այն ուներ 54 սմ լայնութիւն և 12 սմ երկարութիւն գունավոր շերտերով էր ու դրանց մեջ երկրաչափական զարդանախշեր՝ շեղ-



Նկ. 9, 10. Թեղանիքներ (շալաշիկ) տղամարդկանց շապկի թևքաբերանի
(Գեմս, Մեկս), XIX դ. Հոգոթ:




նկ. 10.

անկյունի, դիզվազ և ուղիղ գծանախշեր: Թաղ գյուղում 140՝
ընտանիք զբաղվում էին շալագործությամբ¹: Թաղ գյուղի
բրդյա կտորը վաճառվում էր Վասպուրականի նահանգում և
ներա սահմաններից դուրս՝ հարևան գավառներում: «Շառախի
շալը» հարդի էր նաև Եվրոպայում. այն ուղարկվում էր վա-
ճառքի Դիարբեքիր, Հյուսիսային Միջագետքի քաղաքները²,
Կ. Պոլիս և այլ վայրեր:

¹ Ն. Լալայան, *Տնայնագործությունը Վասպուրականում*, «Ազգագրա-
կան հանդես» Գիրք XXV, Թիֆլիս, 1914, էջ 191,

² Ст. Д. Лисицян, Историко-этнографические очерки Шатаха,
«Известия КИАИ», т. V, 1927, стр. 80:



Տախտակ 3. Տղամարդկանց շապկի ձևվածքը.

1—առջևից, 2— ետևից:

Շալվարը կարում էին նաև Մոկսում արտադրվող բրդյա գծավոր կտորի երկու տեսակից՝ ընտիր բրդյա կտորից (սարտիր) և ավելի հասարակ տեսակից (բրկահ): Սակայն ավելի հարգի էր «Շատախի շալ»-ը: Շալվարը ունենում էր այդ կտորի 6 տապակի լայնություն: Տապակները միացվում էին իրար ասեղնագործությամբ: Վերևամասը խոնջանադարձով էր և խոնջանակապով հավաքվում էր ու ամրացվում գոտկատեղում: Փողաբերանը ասեղնագործվում էր բրդյա կանաչ գույնի թելով: Շալվարի ասեղնագործությամբ զարդարման եղանակը Վապուրականում կար դեռևս միջնադարում: Այդ է ապացուցում Աղթամարի վանքի քանդակներից մեկը՝ Գագիկ Արծրունու բարձրաքանդակը¹ (X դար):

Ըստ թանգարանային նյութերի, տարածված էին շալվարի ձևվածքի երկու տարբերակ: Առաջին տարբերակն ուներ լայ-

¹ Sirapı Der Nersislan, Achtamar, Cambridge, Massachusetts, 1965.

նացման նպատակով ավելացված ամբողջական շեղանկյունաձև կտոր (չաք, ձագ), որի ծայրերը փողաբերանում վերջանում էին սևապաճե (տախտակ 4, նկ. 1 ա, բ, գ), իսկ երկրորդ տարբերակն ուներ համեմատաբար նեղ շեղանկյունաձև




Նկ. 11. Տղամարդկանց շալվարի երկրորդ տարբերակը (XIX դ. ՀՊՊԹ):

կտոր (չաք) (նկ. 11), որի ծայրերը փողաբերանում վերջանում էին ուղիղ կտրվածքով (տախտակ 4, նկ. 2 ա, բ, գ):

Երկու տարբերակն էլ ուներ գունավոր թելերով և մոտ 2 սմ լայնությամբ հյուսված խոնջանակապ: Դրա ծայրերում ամրացվում էին մի քանի փնջիկներ, որոնք զարդարվում էին երկնագույն ուլունքներով: Երկու տարբերակն էլ միաժամանակ գործածական էր Շատախում, Մոկսում, Ալջավազում, Թիմարում և մյուս գավառներում:

Տղամարդկանց տաբաղի առաջին համալիրի կարևոր բաղկացուցիչ մասերից էր կարճ վերնազգեստը՝ բաճկոնը




Տախտակ 4. Տղամարդու շալվարի ձևվածքի երկու տարբերակ. 1 ա, բ, գ—առաջին տարբերակ, 2 ա, բ, գ—երկրորդ տարբերակ:

(իշխիկ), որը նույնպես կարվում էր գունավոր շերտերով, դրանց մեջ երկրաչափական զարդանախշերով բրդյա կտորից (նկ. 12): Տարածված էր կարճ վերնազգեստ բաճկոնի երեք տարբերակ: Առաջին տարբերակի աջ ու ձախ առջևամասերը բաղկացած էին երկուական հատվածից, որոնք միացվում էին լայնակի կարերով: Բաճկոնի առջևամասի եզրերը վերևից ներքև հավասարաչափ լայնությամբ ծալվում էին և ասեղնագործվում: Թևքերը հիմքում ուղիղ էին, բայց դեպի թևքաբերանը նեղանում էին, և ունեին բացվածք: Անութները բացվածքով էին (տախտակ 5, նկ. 1 ա, բ):

Բաճկոնի երկրորդ տարբերակը աջ ու ձախ կրծքամասերը եռանկյունաձև ծալվում էին դեպի թևքերի կողմը, որով և ստացվում էր կրծքի եռանկյունաձև բացվածք: Այդ բացվածքի նպատակն էր շապկի վրա կատարված շքեղ ասեղնագործությունը ցուցադրել: Թևքերը հիմքում ուղիղ էին, թևքաբերանը առաջին տարբերակի նման բացվածքով (տախտակ 5, նկ. 2 ա, բ):

Բաճկոնի երրորդ տարբերակի աջ ու ձախ կրծքամասերի եզրերը վերևում փոքր ծալվում էին, իսկ մնացած մասը կտորի եզրն էր առանց ծալելու: Թևքերը բաղկացած էին երեքական հատվածներից, որոնք միացվում էին իրար լայնակի

կարերով: Թևքաբերանը բացվածքով էր, անութներում կարվում էին առջևից և ետևից մեկական եռանկյունաձև անութակտոր (ախտակ 5, նկ. 3 ա, բ):



Նկ. 12. Տղամարդկանց կարճ վերնազգեստ (բաճկոն), XIX դ., ՀՊՊԹ:


Կարճ վերնազգեստ բաճկոնի երեք տարբերակները՝ կային Վասպուրականի բոլոր գավառներում:

Համալիրին հատուկ էր տաք վերնազգեստը (աբա, քյաղախիկ): Այն գործում էին այծի մաշից (չուռ), հատուկ հաստոցի վրա: Ըստ որում, գործում էին առանձին մասերով՝ ետևամասը, աչ ու ձախ առջևամասերը, թևքերը, որից հետո կարում էին իրար և ստացվում էր ամբողջականը: Երկարությանը հասնում էր մինչև գոտկատեղը: Պատրաստելիս մեկ երեսը գործում էին հարթ, իսկ մյուսը մնում էր երկար մազերով, որը աբալի արտաքնամասն էր: Թևքերը կարճ էին, հասնում էին մինչև արմունկը: Թևքերի տակ կախում էին հաստ թելով մեկական փնջիկ: Աչ ու ձախ կրծքամասերում

¹ Տե՛ս ՀՊՊԹ, ազգագրական ֆոնդ №№ 772, 773, 774, 767, 770 777, 778, 2063 բաճկոնները:

երկայնակի կարում էին կանաչ գույնի ժապավեն և 1 սմ լայնությամբ ոսկեթելով հյուսված ժապավեն¹:

Արևմտյան Հայաստանում աբա գործելու, կարելու հայտնի կենտրոնը Հազո (Սասուն) քաղաքն էր, որտեղ պատրաս-



Տախտակ 5. Տղամարդկանց վերնազգեստի (բաճկոն) ձևվածքի երեք տարբերակ (առջևից և ետևից):

տում էին երեք տեսակի աբա՝ կոնդոկի, ռաշոկի և կյառըկ աբա: Վաստուրականում արտադրված աբան ավելի մեծ համբավ ունեւր: Այստեղ հարգի էր Շատախի Թաղ գյուղի նախշազարդ բրդյա կտորը, և Վանի վարպետների պատրաստած աբան:

Տաք վերնազգեստ աբան հագնում էին բոլոր տարիքի տղամարդիկ: Ունեւոր տղամարդիկ հնարավորություն ունեւին

¹ Տե՛ս ՀՊՊԹ, ազգագրական ֆոնդ № 1000, 1001, 1002, 1003, 1004, 1005, 1006, 2064 արաները:

ձեռք բերել թանկարժեք՝ երկար մազերով աբա: Զունե-
վորները հազնում էին առանց խոպոպիկների, անմազ աբա:
Տաք վերնազգեստ-աբայի միջոցով ևս կարելի էր որոշել
կրողի սոցիալական վիճակը:

Աբան իր տեսակներով գործածական էր նաև Արևմտյան
Հայաստանի մյուս նահանգներում՝ Աղձնիքում, Տուրուբե-
րանում:

Տղամարդկանց ավանդական տարազի համալիրի կարևոր
բաղկացուցիչ մասերից էր նաև գոտին (միջաց շալ): Այն
2—3 մ երկարությամբ բրդյա գունավոր շերտերով, կամ
սպիտակավուն կտոր էր, գերազանցապես Վանում, Շատա-
խում արտադրված բրդյա կտոր: Ավելի ունեւոր խավը գոտու
համար գործածում էր «Քիրման շալ» կոչված բրդյա կտորը,
որը ձեռք էր բերվում Քիրմանից (Թուրքիա): Այդ կտորը
նույնպես շերտերով էր, դրանց մեջ մանր ու խոշոր բուսական
կամ երկրաչափական նախշերով զարդարված: Գոտին լայն
շերտով փաթաթում էին մեջքին, իսկ ծայրերը տեղավորում
փաթաթածի տակ: Գոտու մեջ տեղավորում էին ծխամորճը,
թանաքաման-կաղամարը, ղենքը, ամրացնում էին ծխախոտի
տոպրակը: Այսպիսով, գոտին ծառայում էր նաև այլ նպա-
տակների համար:

Տղամարդկանց գլխի հարդարանքը այս համալիրում բաղ-
կացած էր Թաղիքե գլխարկից (քոլոզ) և փաթաթանից (փու-
շի): Գլխարկը կոնաձև հատուկ եղանակով պատրաստում
էին (լմում էին) իրենք կրողները: Գլխարկի վրա փաթաթվող
գլխաշորը (փուշի) մետաքսյա կտորից էր, կապույտ, սև, կամ
էլ շագանակագույն, քառանկյունաձև: Այն ծալում էին շեղա-
կի, ոլորում և փաթաթում գլխարկ-քոլոզի վրա: Փաթաթանի
եզրերի երկար ծոպերը կախվում էին կրողի ճակատին: Ծո-
պերը զարդարում էին երկնագույն ուլունքներով:

Երկնագույն ուլունքների գործածությունը վասպուրական-
ում տարածված էր ոչ միայն կանանց, այլ նաև տղամարդ-
կանց տարազի առանձին բաղկացուցիչ մասերի զարդարման
համար: Երկնագույն ուլունքները փոխարինում էին աչքի
ուլունքին (աչից ուլնիկ) և ըստ ավանդության, կոչված էին
կրողին ղերծ պահելու չար աչքի ազդեցությունից:

Նրիտասարդ տղամարդկանց գլխի հարդարանքը գլխարկ-
արախշին էր (նկ. 13): Արախշին կարվում էր սպիտակվուն,
խոշոր հյուսվածքով բամբակյա կտորից՝ քաթանից: Դրա
ամբողջ մակերեսը բրդյա գունավոր թելերով ասեղնադործ-



Նկ. 13. Գլխարկ-արախշի, Թիմարի գավառ, XIX դ., ՀՊՊԲ:

վում էր երկրաչափական զարդանախշերով՝ շեղանկյունինե-
րով, եռանկյունիներով և թեք ընդհատվող գծանախշերով:
Ըստ որում՝ գազաթն ունեւր զարդանկարային առանձին կա-
ռուցվածք: Արախշին զործածվում էր թե՛ առանց փաթաթա-
նի, և թե՛ փաթաթանով:

Գլխարկ-արախչին գործածական էր նաև Արևմտյան Հայաստանի մյուս գավառներում՝ Սասունում, Մուշում, Հարքում: Վնասվորականում գլխարկ-արախչին երկար պահպանվեց Թիմարի գավառում: Այն դեռում էին իրենց գլխին ոչ միայն տղամարդիկ, այլ նաև շամուսնացած կանայք: Այսպիսով, ընդհանրություն կար կանանց և տղամարդկանց գլխարկ-արախչու գործածման մեջ:

Տղամարդկանց ազանեկիքը նախշազարդ գուլպան էր և ոտնամանը՝ տրեխը (շարուխ), որը կարում էին գյուղերում, յուրաքանչյուրը իր համար: Տրեխը կարում էին գոմեշի կամ տավարի կաշուց: Վանում կային վարպետներ, որոնք ընդունում էին նաև տրեխ կարելու պատվերներ: XIX դարի վերջից, հատկապես 1890-ական թվականներից հետո և XX դարի սկզբին, քաղաքային համալիրի տարածման հետ մեկտեղ տարածվեց նաև համալիրի ոտնամանը՝ սուլը: Կար սուլի երկու տեսակ՝ պոշավոր և անպոշ: Պոշավոր էր կոշվում այն պատճառով, որ ներբանի եզրին 5 սմ երկարությամբ կաշվե պոշ էր կարվում գյուրին հագնելու համար:

XIX դարի վերջին Վասպուրականի քաղաքներում մուտք էր գործել Եվրոպական ոտնամանը և XX դարի սկզբին այն քաղաքային տարազում գերակշռող էր:

Այսպիսով, Վասպուրականի տղամարդկանց տարազը թե՛ ձևվածքով, և թե՛ զարդարման եղանակներով, ինչպես և կանանց տարազը, առանձին խումբ էին կազմում: Տարազն ունեւր իր տարբերակները Արևմտյան Հայաստանի մյուս նահանգներում:

Տղամարդկանց ավանդական տարազը բաղկացուցիչ մասերի զարդանախշման յուրօրինակ ասեղնագործման և զարդանկարային կառուցվածքի բնորոշ կողմերով ընդհանրություն ունեւր ժողովրդի նյութական մշակույթի մյուս բնագավառների հետ և արտահայտում էր դրանց միասնական ոճը:

Վասպուրականի ժողովրդական տարազը իր ինքնատիպությամբ, հարուստ զարդարվեստով ուրույն տեղ ունի հայ ժողովրդի նյութական մշակույթի գանձարանում:

Н. Х. АВАКЯН

НАРОДНАЯ ОДЕЖДА ВАСПУРАКАНА В XIX —
НАЧАЛЕ XX ВЕКА

Р е з ю м е

В XIX и начале XX века в Васпураканской губернии бытовало по два комплекса женской и мужской народной одежды, которые изготовлялись и украшались соответственно природно-климатическим условиям, социально-экономическому положению народа, а также занятиям и вкусам населения ее различных уездов.

Составными частями первого комплекса женской традиционной одежды являлись: нательная одежда (рубаша и штаны), верхняя одежда (зпун) — в трех вариантах, передник в двух видах, один из которых вышивался геометрическими орнаментами, пояс, верхняя теплая одежда (далма), головной убор и обувь.

Одежда богато украшалась вышивкой, золотыми и серебряными украшениями, кораллами, бусами.

Вторым комплексом женской одежды была городская одежда, которая начала бытовать с конца XIX в. в городах Ване, Арчеше, Арцке и в годы первой мировой войны, в связи с переселением васпураканцев в Восточную Армению, сохранялась в новых местах жительства до 20-ых годов нашего столетия.

Комплекс мужской одежды состоял из нательной рубашки со свободно спускающимися концами рукавов, шаровар и верхней короткой одежды (бачкон). Шаровары и бачкон шились из полосатой шерстяной ткани (шатахи шал), украшенной геометрическим орнаментом. В комплексе мужского костюма васпураканцев входил также широкий и длинный пояс (меджац шал),

верхняя теплая короткая одежда (аба), изготовлявшаяся из козлиной шерсти с длинным ворсом. Головным убором служил конусообразный колпак из войлока (ко-лоз) с повязкой, а летом — арахчин, т. е. феска, вышитая шерстяными разноцветными нитками, с геометрическими орнаментами. Мужчины носили узорчатые шерстяные чулки и лапти, которые изготовлялись из кожи буйвола.

С конца XIX в. вместе с мужской городской одеждой начал бытовать другой вид обуви (сол) и обувь европейского типа.

Женская и мужская народная одежда различных уездов Васпуракана имела общность с одеждой других уездов Западной Армении — Арка, Муша, Тарона, Сасуна.

Народная одежда Васпуракана своими орнаментированными тканями, своеобразными видами вышивки, композицией орнаментов перекликалась с орнаментальным искусством ковроделия, кружев и ювелирных изделий той же губернии.

Народная одежда Васпуракана занимает важное место в сокровищнице материальной культуры армянского народа.